

ճաշակին համեմատ ունին տարբեր տեսակ ճարտարապետությունը և որոնք կոչուեցան Մայր ևկեղեցի (Basilique):

Ժ. Ճաշարան (réfectoire) եւ խոհանոց (cuisine)

Վանատանց ընդարձակ, վայելուչ, զարդարուած վայրերէն մին ալ յետոյ ծաւանակաւ եղած է ճաշարանը կամ սեղանատունը, ուր միարանք կը հաւաքուին ճաշի ժամանակ: Ընդհանրապէս երկարածակ տարածոց մ'ունի. երեք կողմերն սեղաններ յարդարուած են, միջոց տեղին ազատ թողուած՝ ծառայութեան դիւրութեան համար. բարձր գահէ մը, կամ ամպիոնի մը վրայէն ճաշու պահուն միանձն մը կ'ընթեռնուր սուրբ գիրքը և կամ հոգեշունչ մատեան մը, և բացարձակ լռութիւն մը կը պահուէր: Ասոր հետեւողութեամբ է, որ երանաշնորհ Մխիթար Արքայ, իւր գեղեցկայարմար կերտած Ս. Ղազարու սեղանատան վրայ զրել տուեւ է «Աստ յոսրիս ե պահելի, և սորբ գրոց ոչ ղեկի»: Սովորաբար ճաշի սպասաւորք էին ծառայք կամ աւելի աշխատաւոր եղբայր կոչուած միանձններ:

Միշտ ճաշարանին մերձ զետեղուած է վանատանց մէջ խոհանոցը ընդհանուր միանձնաց համար: Բայց մեծ վանատուններ բաց աստի ունէին Արքայից, հիւրերու և հիւանդաց համար ալ զատ խոհանոցներ, որոնց ծառայողք՝ զարձեալ ներքին աշխատաւոր եղբայրներ էին: Ս. Բենեդիկտոս կը հրամայէ, որ կրօնաւորական հոգ տանին ամէն իրաց և մաքուր պահպանեն ամենայն ինչ, Միծին կարողութիւն ժամանակ սեղանատանց որմերը և ձեղունը գեղեցկապէս զրուակուած և պատկերաւ զարդ էին: Արքայ Անտէօք Ֆրանցիսկէի սեղանատունը զարդարել տուաւ Մատալուի տը Քամպրէի նկարներով:


ԺԱ. Ննջարան (dortoir)

Առաջին անգամ երբ միարանական

կեանքը իւր կանոնաւորութիւնն առաւ՝ միանձնուք կը ննջէին ընդարձակ սրահի մը մէջ, երկնագունի մը հսկողութեան ներքեւ. ամէն ոք ունէր իր յատուկ վայրը և կը կոչուէր տեղին Ննջարան: Իրենց բազմութեան համեմատ միենոյն մենաւտանին մէջ կային մի քանի ննջարաններ, որոնք պատշաճօրէն կահաւորուած և զարդարուած էին: Իրենց մահինը կազմուած էր անկողնեակէ մը՝ սովորաբար յարդեայ, սաւանէ, ծածկոցէ և բարձէ, և ամէն ոք կ'ընկողմանէր իր զգեստովը: Միանձնաց առանձին սենեկի մէջ ննջելը յետոյ ժամանակաւ մուտ գործեր է: Ննջարանները կը գտնուէին վանքին առաջին յարկին վրայ՝ մերձ սեղանատան և ժամատան, սանդուխով մը յարարերութեան մէջ զրուած էր ժամասացութեան տեղոյն հետ: Ամէն ննջարան ունէր իր ազօթատեղին ալ:

(Շարունակելի)

Ռ. Կ.



ԼԵԶՈՒԱԳԻՏՈՒՄԸ

ՌԻՂԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ս. ԿԻՐՈՂԻ ԵՐՈՒՍԱՂԵՄԱՅԻՈՅ

ԿՈՉՈՒՄՆ ԸՆԺԱՅՈՒԹԵԱՆ

(Շար, տես 1922 թգմ. էջ 15)

ԾԹ.

Էջ 303. տող 9. «Երկու էջը, մի՛ անյայտք և աներևոյթ խորհրդով ի վերայ գեղման. և երկրորդ՝ որ յայտնապէս հանդերձեալ ԳՅՑ ՓԱՌՈՒԹ ԵՒ ԳՈՎՈՒԹԵԱՄԵՐ: Ետաշնու՛մ գալստեան գայ փառօք և զովորեալմբ: Ետաշնու՛մ գալստեան անդ պատեցաւ ի խանձարուրս, և եղաւ ի մտուր Յերկրորդ գալստեան անդ արկեալ գայ զիրեաւ զլոյս իբրեւ զթոց»: Ուղղ. նտորագրուածը ջնջելու է. վասն զի զըջագրողի վրիպակ մ'է. որով յաջորդ

պարբերութեան սկիզբը միացեր է նախընթաց պարբերութեան վերջին հետ:

ուրուգ գործն (եղէզն, խոտ) այրեսցի՝ տուծեսցի » (Կորնթ. Ա. Գ. 12-15):

4.

Էջ 310. տող 4. Մինչև ցայն վայր որ ասէ... Մէկ կտոր մը բաց թողեր է Պաւղոսի հաստուածէն:

4Ա.

Էջ 311. տող 9. « Բայց աւասիկ եկեալ կայ ապստամբութիւն. զի ապստամբ եղեն մարդիկ և յետս կացին յուղիղ հաւատոյ անտի: Եւ ոմանք որդեհարարեամբ պատմեն, և ոմանք զՔրիստոս ի չեղելոյ եղեն ասել իշխեն »:

Ուղղ. Եւ ոմանք Որդի հայրութեամբ պատմեն, և ոմանք զՔրիստոս ի չեղելոյ՝ եղեն ասել իշխեցին: Սարկիսանք զՀայր և զՈրդի մի անմեաւորութիւն կ'ըսէին:

4Բ.

Էջ 320. տող 14. « Այլ մեք ակն կայցուք տեսնո մերոյ յերկնից զալտեան, որ գայ ընդ ամպս երկնից. փողք հեշտակաւ յայնմ ժամանակի գոչեն »:

Ուղղ. փողք հրեշտակականք (տես էջ 323 տող 10.):

4Գ.

Էջ 322. տող 14. « Հուր առաջի նորա գնայ ». փորձիչ մարդկան, եթէ իցէ, որ գործք իւր ոսկի իցէ, լուսաւորագոյն լինի. եթէ իցէ՝ որ եղեգնախառն իցէ գործովք, արգելեալ կայ ի մէջ հրոյն »:

Ուղղ. եղեգնախառն իցէ գործովք, այրեցեալ կայ ի մէջ հրոյն: Պողոս Առաքելոյ խօսքերու կրկնութիւնն է. եթէ ոք շինէ ի վերայ հիմանս այսորիկ՝ ոսկի, արծաթ... փայտ, խոտ, եղեգն... և զիւրաքանչիւր գործն զիարդ և իցէ հուրն փորձեսցէ, եթէ ուրուգ գործն զոր շինեսցէ՝ (ոսկի) կացցէ (և լուսաւորագոյն լինի)... եթէ

4Դ.

Էջ. 325. տող 12. « Զի Յորժամ եկեաց է ասէ որդի մարդոյ փառովք իւրովք, և ամենայն հրեշտակք իւր ընդ իւր ». քանի՞ մարդկան առաջի մտանես ի դատաստան, զի ամենայն ազգ՝ և ազիւնք մարդկան յայնմ ատենին »:

Ուղղ. Զի ամենայն ազգ և ազիւնք մօտ կան յայնմ ատենին: Վերաբերելով դատաստան առ իւրաքանչիւր անհատ, նա պիտի տեսնէ իրեն մօտ կանգնած, դատաւորի առջև, երկրիս համօրէն ազգերը և ժողովուրդները:

4Ե.

Էջ 341. տող 15. « Զի և նոքա իսկ՝ որ մանտանուն աշակերտքն էին, զհամաՆուն մեծ քրիստոնէից ղնէին անձանց իւրեանց ստութեամբ »:

Ուղղ. զհամանուն մեծ քրիստոնէից: Զար աղանդաւորն Մոնտանոս, ժպրհեցաւ զինքն հոգի սուրբ ասել. նորուն աշակերտներն ալ մեզի պէս զիրենք քրիստոնեայ կը կոչէին:

4Զ.

Էջ 341. տող 27. « Նոր ուսումն ուսոյց զմոլորութեան իւրեանց, իշխեաց ասել (Մանի), թէ ես իսկ եմ բարեխօսն, զոր խոստացաւ Քրիստոս առաքեալ իսկ արդ Փրկիչն խոստացաւ առաքելոցն »:

Ուղղ. առաքել. իսկ արդ:

4Է.

Էջ 342. տող 3. « Արդ հաստացեալ առաքեալքն կային Յնային. են. »:

Ուղղ. Արդ հանգուցեալ առաքեալքն կային Յնային:

ԿԸ.

ԻՉ. 352. տող 13. «Այր ոք այր ոք՝ դեռ անդէն ի մարմին իւրում ընդ վայրենի դէս մարտ եղեալ յաղթէ»:

Ուղղ. Այր ոք այր, որ դեռ անդէն էն.:

ԿԹ.

ԻՉ 353. տող 1. «Բարեխօս կոչեցեալ է վասն մխիթարութեան քարեխօսարեան և օգնականութեան տկարութեան մերոյ»:

Ուղղ. վասն մխիթարութեան որով բարեխօս է ի թիկունս օգնականութեան հասանէ:

Հ.

ԻՉ 354. տող 17. «Եւ լայնեա՛ դու գմիտս քո ի պաղեստինացւոց աշխարհէ աստի ի հռոմոց թագաւորութիւն. և անտի տնս զպարսից աշխարհն, զհնդկաց աշխարհն, զգլխաց, գուռքամատաց գաղղիաց, սպանիաց, մաւրոսաց, լիբէացւոց, եթեով պացւոց, և զայլոց»:

Ուղղ. զՍաւուրդամատաց կամ զՍարմատաց, Գաղղիոյ, Սպանիոյ. իսկ ի յոգնականն ջոց:

ՀԱ.

ԻՉ. 358. տող 4. «Զի այժմ փոքր ի շատէ են շնորհքն, այլ յայնժամ առաւտութեամբ բաշխէին պարգեքն: Բայց առակ էր, որ լինելոց էր յաւուր Պենտեկոստէից առ մեօք»:

Ուղղ. բայց առակէր, (այսինքն նշանակէր). կամի Ս. Հայրս ասել թէ ի հնումն ևս առատապէս բաշխուեցան պարգեք Հոգւոյն, բայց այն ամենայն նմանութիւն մ'էր. ակնարկութիւն՝ ինչ որ Պենտեկոստէից օրը Հոգին Սուրբ զգալի օրինակով պիտի հեղուր հաւատացելոց վրայ իւր շնորհքը:

ՀԲ.

ԻՉ 362. տող 17. «Ասա դու ինձ գերազն զոր տեսի. և տեսի, և ոչ գիտեմ»:

Ուղղ. ես տեսի և ոչ գիտեմ: «Տեսանես զգօրութիւն Հոգւոյն սրբոյ, որ տեսինն չգիտեն և որ ոչն տեսին և՛ գիտեն և՛ թարգմանեն»:

ՀԳ.

ԻՉ 365. տող 6. «Յայնժամ վասն լսելիաց ամիոփութեան զյօժարութիւն կարճեցաք. զի անյագ իմն է վասն Հոգւոյն սրբոյ ճառք պատգամաց. բայց այժմ ի կողմն մի որ ինչ պիտոյ է, դարձեալ միասնգամ առցուք. զղօղեալ մերոյ տկարութեան ի բազմութենէ գրոցն ճառիցս, զայս այժմիկ մտադիրութեամբ խոստովանիմք»:

Ուղղ. ի բազմութենէ գրոցն ճառից: Հոգւոյն Սրբոյ մասին ճառելը, Ս. զբքի վկայութեան շատութեան համար, միայն մէկ կողմանէ նկատեր է բանը, հիմայ ուրիշ տեսակէտով պիտի ճառէ: Տես էլ 380 տող 13. Իսկ արդ թերեւս... ի շինած բանիդ:

(Շարունակելի)

Հ. ԳԱՐԲ. ՆԱՍՊԱՅՏՈՒՆ



ՀԱՅԵՐԷՆ ՆՈՐ ԲԱՌԵՐ

ՄԱՇՏՈՑԻ ՄԷՋ

(Շար. տես 1922 թվ. էլ 17)

Վարդագեղ «վարդի պէս գեղեցիկ»։ Բազմերանգ, ազգի ազգի գունովը, ծառովը և ծաղկամբը, բուսովը և տնկովը, վարդագեղ, կարմրափայլ զարդաբեւ. Մ. մաշտ. 24 ա:

Վերայայտիլ «վերը դաստիլ, վերը դասաւորուիլ»։ Շնորհեա նմա ընդ երջանիկ հայրապետացն վերադասիլ. Մ. մաշտ. 363 բ: